ԱԴՈՆՑԵԱՆ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ

ՊԵՏՐՈՍ Ց. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Նիկողայոս Ադոնցը (1871–1942) հայագիտութեան ականաւոր ներկայացուցիչներից է: Նա նշանաւոր, միջազգային մեծ ճանաչում ու հեղինակութիւն ունեցող բիւզանդագէտ էր, արեւելագէտ, լեզուաբան: Տարիներ շարունակ դասախօսել է Ս. Պետերբուրգի համալսարանի արեւելագիտական ֆակուլտետում, իսկ 1930–1942 թթ. եղել է Բրիւսելի համալսարանի հայագիտութեան ամբիոնի վարիչը: Նրա աշխատութիւններից իւրաքանչիւրը, իսկ դրանց թիւը չուրջ հարիւր է, գլուխգործոցներ են, իսկ Հայաստանը Ցուստինիանոսի Դարաշրջանում մենագրութիւնը (ռուսերէն, Ս. Պետերբուրգ, 1908, յետագայում թարգմանուել է անգլերէն եւ հայերէն) իրաւացիօրէն համարւում է հայագիտութեան բարձրագոյն արդիւնքներից մէկն ու չգերազանցուած՝ իր բնագաւառում: Ուստի, հասկանալի է, թէ իրենցից որքան մեծ արժէք են ներկայացնում նաեւ ադոնցեան չհրապարակուած, դեռեւս անյայտ մասունքները՝ նամակներ, ուղերձներ, դիտողութիւններ, կարծիքներ, որոնք ցրուած են զանազան վայրերում, հանգրուան են գտել զանազան դիւաններում:

Այսու շրջանառութեան ենք դնում նման երկու մասունք, որոնք օգտակար կարող են լինել Ն. Ադոնցի ամբողջական, աւարտուն դիմագիծը պատկերելիս: Մասունքներից մէկը վերաբերում է Հայոց քերթութեան անմահ դէմքերից մէկին՝ Սիամանթոյին եւ դրանով իր նպաստը կարող է բերել նաեւ բանաստեղծի կենսագրութեան՝ որոշ իրողութիւններ ճշդելիս:

Ա. Զոպանեանին ուղղուած նամակի բնագիրը պահւում է Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի Արշակ

Զոպանեանի ֆոնդում (I բաժին, 133, համար 26), իսկ երկրորդի բնագիրը՝ Հայաստանի Հանրապետութեան պատմական պետական կենտրոնական արխիւում (ֆոնդ 399, ց[1], գ. 93):

Երկուսն էլ բնագիր են, ձեռագիր:

Բնագրերը հրատարակւում են նոյնութեամբ, որոշ անհրաժեշտ կէտադրական միջամտութիւններով:

N° 1
ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԳՈՅՔԵՐԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

2 Մարտի 1904թ.
Սանկտ Պետերբուրգ

Առաջադրելով յարգելի Խորհրդիդ ուսանող Ատոմ Եարճանեանի խնդրագիրը, կարեւոր եմ համարում մի քանի խօսք ասել նրա մասին ի գիտութիւն անդամներիդ: Պարոն Եարճանեան թուրքահայ է եւ ուսանող է Պարիս՝ Սորբոնում[1]: Գրեթէ պատանի, 22–23 տարեկան[2], օժտուած բնատուր շնորհքով, նա պարապում է միեւնոյն ժամանակ եւ գրականութեամբ, ու արդէն յայտնի է խոր եւ սրտառուչ բանաստեղծութիւններով[3]: Նիւթական դառն պայմաններն ու պէս-պէս զրկանքները հիւծել եւ քայքայել են նրա առողջութիւնը եւ վերջերս երեւան են եկել թոքախտի նշաններ[4]: Վերահաս վտանգէ ազատելու համար խեղճ տղային, նրա ընկերները եւ յարգողները[5] մի թեթեւ գումար հաւաքելով ղրկել են նրան Շվէյցարիա բժշկուելու[6]: Քանի որ Խորհուրդդ սկզբունքով եւ գործով նպաստում է ուսանող երիտասարդութեան, ցանկալի կը լինէր, որ նա հաճէր յարգելու պարոն Եարճանեանի խնդիրը: Նա միանգամայն արժանի է Ձերդ օգնութեան, որովհետեւ ուսանող է, գրող եւ վերջապէս՝ հիւանդ: Նրա ապագան կապուած է հայ գրականութեան հետ եւ նրա կորուստը կորուստ է հայ գրականութեան համար[7]:

Ցարգանքով՝
Ն. Ադոնց

N° 2
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆԵԱՆԻՆ

Ազնիւ բարեկամ,

Ցաւում եմ, որ միայն այժմ կը գամ արձագանգ տալու ձեր վերջին քարտերին: Աննեբելի է լռութիւնս, մանաւանդ պարոն Սղերդցեանի[1] խնդրի համար: Դժբախտաբար որոշակի չեմ կարող ասել թէ Խորհուրդը[2] հնարաւոր կը գտնի՞ օգնութեան հասնելու յիշեալ երիտասարդին, որի համար բարեխօսելու նեղութիւնն դուք եւս յանձն էք առած: Աւելորդ չեմ համարում մի քանի խօսք գրելու Ձեզ այս առթիւ, Եկեղեցական Խորհրդիս՝ ուսանողներին օգնելու խնդրին ընդհանրապէս:

Տեղւոյս Եկեղեցական Խորհուրդը ամէն տարի աւելի քան 17,000 ռուբլի կը ցրի ուսանողութեան: Մինչեւ այժմ նպաստներ եւ թոշակներ տրուել են առանց որեւէ առաջնորդող սկզբունքների այս կամ այն անձնաւորութեանց անխտիր կամ ճշմարիտ կարիքին: Խորհրդիս ներկայ կազմը մինչեւ այժմ հետամուտ էր ինչինչ սկզբունքներ մշակելու, թէ՛ թոշակներ բաշխելու եւ թէ՛ եկեղեցական դրամները աւելի նպատակայարմար գործ դնելու վերաբերութեամբ: Նորերս միայն որոշ եզրակացութեան եկանք եւ մշակուած կանոնագրութիւնը պէտք է առաջնորդ լինի մեզ մեր գործունէութեան: Գուցէ յետոյ Ձեզ մի օրինակ ղրկելու հարկաւորութիւն զգանք, որից մանրամասն կը տեղեկանաք նոր ծրագրիս: Այսքանս ասել կը բաւականանամ, որ նոր Խորհրդի հայեցողութեամբ՝ չքաւորութիւնը տակաւին բաւարար հիմք չէ, որ ուսանողին օգնելու հարկաւորութիւնը պարտաւոր համարէ Խորհուրդը: Ազգային մեծ հաստատութիւն լինելով (ներկայ հանգամանքներում գրեթէ միակը), Եկեղեցին, մեծ պատասխանատուութիւն ունի հասարակութեան առջեւ[3], եւ պարտաւոր է դրամները տնօրինելու այնպէս, որ արդիւնքը հասարակական բնոյթ կրէ: Հայ Եկեղեցուց օգնութիւն հայցելու իրաւունք ունենալու են միմիայն այն անձինք, որ վստահ են, որ ապագայում պիտանի են լինելու այս կամ այն մտքով հայ ազգին, նրա մերձաւոր կարիքները դարմանելով: Ցունուարից կը սկսուի նոր ծրագրի գործադրութիւնը: Պարոն Սղերդցեանին ճանաչելու հանոյքը չունեմ, բայց նրա տոկունութիւնը գովական է: Եթէ անձամբ կ'երաշխաւորէք, որ իրօք արժան է հասարակական օգնութեան պարոն Սղերդցեանը, այն ժամանակ նրան խորհուրդ տուէք խնդիր ուղարկելու Խորհրդի անունով, եւ կից՝ Ձեր յանձնարարական նամակը Խորհրդին ներկայացնելու: Ցուսով եմ, որ կը յաջողուի նրան թոշակաւոր ընդունել մինչեւ ուսումն աւար-

տելը՝ պատասխանատուութիւնը որոշ մտքով Ձեր վրայ թողնելով։ Ինչպէս կը դատեն Խորհրդի միւս անդամները, չգիտեմ, բայց ես կ'աշխատեմ այս ուղղութեամբ...[4]։

18 *Դեկտեմբերի*, 1904

Ցարգանքով՝
Ն. ԱԴՈՆՑ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

N° 1

1. Սիամանթոն եղել է Սորբոնի համալսարանի գրական բաժնի ազատ ունկնդիր (1897–1901), ապա մէկամեայ ընդմիջումից յետոյ շարունակել է հետեւել նոյն համալսարանի փիլիսոփայութեան եւ համաշխարհային գրականութեան դասընթացքներին (1902–1903)։
2. Սիամանթոն ծնուել է 1878 թուականին, հետեւաբար 1904–ին նա 26 եւ ոչ թէ 22 տարեկան էր։
3. Սիամանթոյի առաջին բերքուածը՝ «Ամսորուած խաղաղութիւն» խորագրով, լոյս է տեսել 1898 թուականին Մանչեստրում հրատարակուող *Վաղուան Հայը* թերթում։ Այնուհետեւ նա տպագրուել է *Անահիտ*, *Ազատամարտ* եւ այլ պարբերականներում։ Հետաքրքիր է նշել, որ Ն. Ադոնցն իր խմբագրած *Բանբեր Գրականութեան եւ Արուեստի* վեցամսեայ հանդէսի Ա. եւ Բ. հատորներում (Ս. Պետերբուրգ, 1903–1904) տպագրել էր Սիամանթոյի «Հոգեւարքի եւ յոյսի ջահեր» շարքի մի շարք բանաստեղծութիւններ՝ «Աղօթք», «Զարչարանքի երազ», «Թաղում», «Գթութիւն», «Մարաւ» (հատ. Ա., էջ 143–147), «Հոգիս», «Արիւն», (հատ. Բ., էջ 115–116)։
4. Թոքախտի (հիւծախտի) նախանշաններն ի յայտ էին եկել 1904 թ. Յունուարին։
5. Ակնարկում է Մինաս Չերազին, Ա. Զոպանեանին, Վ. Թէքէեանին եւ այլոց։
6. Սիամանթոն բուժւում էր Շվէյցարիայի Լէյզէն առողջարանում։
7. Ն. Ադոնցի սոյն գրութեան վրայ մակագրուած է՝ «Տալ տեղեկանք»։

N° 2

1. Ցաւօք, հնարաւոր չեղաւ պարզել ինքնութիւնը։
2. Ակնարկում է Ս. Պետերբուրգի Հայոց Եկեղեցական Խորհրդին, որին Ն. Ադոնցն աշխատակցում էր սկսած 1904 թուականից որպէս նախագահի տեղակալ։
3. Յետագայում եւս Ն. Ադոնցը տարբեր առիթներով շեշտում է այն միտքը, թէ «Հայոց Եկեղեցին եղել է եւ մնում է ամբակուռ գօտի հայութեան մէջքին» (տես՝ Պրոֆ. Ն. Ադոնց, «Պէշիկթաշլեան եւ կցորդ խնդիրներ», ՀԱՅՐԵՆԻՔ ԱՄՍԱԳԻՐ, թ. տարի, թիւ 6 (102), Պոսթըն, Ապրիլ 1931, էջ 91։
4. Բաց եմ թողել մի հատուած, որն աղերս չունի արծարծուող խնդրի հետ։

Պ. Ց.

RELICS FROM NIGOGHAYOS ADONTS

Petros H. Hovhannisian

(SUMMARY)

The author presents here two hitherto unpublished letters of Nicoghayos Adontz, the renowned Armenian historian, Byzantologue, orientalist and linguist (1871-1941). Of these letters the first is sent to Armenian church authorities of St. Petersburg, and sheds some light on the student life of the famous Armenian poet, Siamanto (Atom Yardjanian), while the second, sent to Arshak Chopanian of Paris, the reputed Armenian poet, prose writer, critic, and the editor of the Armenian monthly **Anahit**, discloses how the Armenian church authorities functioned at St. Petersburg while alloting scholarships to the needy Armenian students. In both cases, Hovhannisian annotates the letters to make things clear.